



Ամսոյս 9-ին յետ կէս աւուր ժամը 4-ին Մայր Աթոռոյ Տպարանի քարտուղար ՍԱՐԳԻՍ ԳՆՈՒՆԻՆ յիսուն և մի ամաց հասակում կնքեց իւր մահկանացուն, որոյ մարմինը հետեւեալ օրը ամփոփուեց Վաղարշապատի հասարակաց գերեզմանատան մէջ:

Հանգուցեալը ծնել է 1838 թ. Մայիս ամսոյ 10-ին Վան նահանգի Էրէրին գիւղում. իւր սկզբնական ուսումն աւարտելուց յետ, նոյն գիւղի ծխական դպրոցում փոխադրւում է Վան քաղաք 1855 թ. և մտնում է Յիսուսեան վարժարան: Իսկ 1857 թ. գնալով Կ. Պօլիս և Մագսուտ Ամիրայի (Հայր Մագսուտ Սիմոն պէյի) որդեգրութեամբ մտնելով Միջագիւղի Ս. Թարգմանչաց վարժարանը, անխոնջ աշխատութեամբ աւարտում է իւր ուսման ընթացքը 1860 թ. ստանում է վկայական իւր յառաջադիմութեան համար վարձատրուելով մինէազարդ արծաթեայ մեդալով, ապա կարգւում է օգնական Հայկաբանութեան ուսուցչի Յովհան Վանանդեցու նոյն վարժարանին, և նորաբաց Հռիփսիմեան օրիորդաց ուսումնարանին:

Հանգուցեալը Կ. Պօլսում 1860 թ. հրատարակում է «Վարդ» անուն ամսաթերթը աշխատակցութեամբ իւր աշակերտակցի Թովմասու Թերզեան: 1863 թ. վերադառնալով հայրենիք, կարգւում է ուսուցիչ Հայոց լեզուի և կրօնի Յիսուսեան վարժարանում, ուր ցոյց է տալիս մեծ

յառաջագիմութիւն. այլ և կազմուժէ «Ընթերցասիրաց Անդրանիկ» ընկերութիւն: որը տեւումէ տասն տարի: 1872 թ. ընտանեօք անցնելով Ռուսաստան՝ Երջանկայիշատակ հանգուցեալ Գէորգ Դ. Կաթուղիկոսի հրամանաւ հաստատուումէ ուսուցիչ Հայոց լեզուի, Կրօնի և պատմութեան Հայոց, Իգդիրու դպրոցում, ուր անընդհատ շարունակուժէ երեք տարի: 1877 թ. գալով Վաղարշապատ, կարգվումէ ուսուցիչ Վաղարշապատու դպրոցին և շարունակուժէ իւր այս պաշտօնը չորս տարի: 1881 թ. հանգուցեալ կաթուղիկոսի հրամանաւ կարգվումէ քարտուղար և սրբագրիչ Տպարանի Ս. Էջմիածնի և կառավարեց այդ պաշտօնը սրբութեամբ և հաւատարմութեամբ մինչ իւր մահուան օրը:

Հանգուցեալը յայտնի էր իւր գրաւոր վաստակօք. և թողած է հետեւեալ աշխատութիւնները, Գրեպոնեկան վարդապետութիւն, Ընդդէմաբանութիւն Վարդապետ ընդ Վասակայ. Ողբերգութիւն Վարդապետ ընդ Վասակայ. Համասօք Ժերականութիւն. Ողբերգ. Աբէլ, և բողոքականաց հրատարակած «Ես դատեցի» ի դէմ՝ մի պատասխան Դոստոյեւսի ինչ որ կրօնէի, թողով և ուրիշ շատ անտիպ աշխատութիւններ, այն է Հայոց վարդեր և ժէնր, այսինքն իսկզբանէ անտի Հայ ազգութեան կամ եկեղեցւոյ պաշտպանող և վնասող երեւելի Հայոց կենսագրութիւնը և ապագայի տուած վարդէ կամ փշէ պսակներ. Կենսագրութիւն Գէորգ Դ. Կաթուղիկոսի. Հրահանգ սաման Հայոց լեզուի. Ողբերգ. Ս. Ղևոնդեանց. Ողբերգ. կամ Եղբելի վախճան «Երայոյ Վասակայ. Ողբերգ. Յովնէիայ Գեղեցիկ և Ժառանգորութիւն. Կարապետութիւն Սարի Գեղացի խաչագողներ. Կարապետ Իմաստակ վարդապետ և սար Բժշկի. Կարապետ Գառապէանի. Կարապետ Բանդապետի. նաև չէ դադարած թղթակցելով Հայ պարբերական թերթերին. իւր ունեցած պատմական և կրօնական հմտութեամբ ջատագով հանդիսացած էր թէ բանիւ և թէ գրով իւր մայրենի Ս. եկեղեցւոյն, և սիրելի եղած իւր ժամանակի Հայրապետաց ազգիս և միաբանութեան Ս. Էջմիածնի. Հանգիստ ոսկերացդ անխոնջ մշակ. Աստուած այց արացէ խնամքի կարօտ՝ որը զաւակներիդ: